ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնանշման հարցման հանձնաժողովի 2017թվականի «օգոստոսի» « 3-ի» «2» որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն

Գնանշման հարցման ծածկագիրը՝ ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02

Պատվիրատուն՝ <<Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն>> ՓԲԸ-ն, որը գտնվում է ք.Երևան, Հալաբյան 38/7 հասցեում, հայտարարում է գնանշման հարցում, որն իրականացվում է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Գնանշման հարցման ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել <<Օդափոխման համակարգի սպասարկման>> ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնանշման հարցմանը մասնակցելու հավասար իրավունք:

Գնանշման հարցմանը մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշներն ու այդ չափանիշների գնահատման համար ներկայացվելիք փաստաթղթերը սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնանշման հարցման հրավերը թղթային ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ 6-րդ օրը ժամը 11:00-ն: Ընդ որում, թղթային ձևով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է թղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն անվճար ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը 11:00-ն: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրը ժամը 11:00-ին:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները պետք է ներկայացնել Գնումների բողոքարկման խորհուրդ՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1 հասցեով: Բողոքարկումն իրականացվում է սույն գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով: Բողոքը ներկայացնելու համար պահանջվում է վճար՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով, որը պետք է փոխանցվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության անվամբ բացված «900008000482» գանձապետական հաշվեհամարին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար ՝Աննա Հարությունյանին

Հեռախոս 29-75-36

Էլ. փոստ procurement@healthpiu.am

Պատվիրատու <<Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն>> ՓԲԸ

**ANNOUNCEMENT**
**On Request for Quotation**
**The text of this announcement is approved by the Decision N 2 of Request for Quotation Committee dated 3 August, 2017 and is being published according to Article 27 of the Law of the Republic of Armenia "On Procurement".**
**Code of the Request for Quotation: ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02**

The Client, ''Radioisotope production center'' CJSC, located at 38/7 Halabyan street, Yerevan, RA, is announcing request for quotation which is being carried out in one phase via electronic procurement Armeps system.

The participant selected in the request for quotation according to the defined order will be suggested to sign a supply contract for Maintenance of ventilation system (hereinafter the Contract).

According to the terms of Article 7 of the RA Law "On Procurement", all persons or entities, irrespective of being a foreigner, a foreign entity or a stateless person, has the equal right to participate in request for quotation.

Qualification criteria for persons not having the right to participate in the request for quotation, as well as for participants and documents for evaluating those criteria are defined by the invitation of this procedure.

The selected participant is determined from the participants having submitted evaluated bids satisfactory to the invitation requirements by giving preference to the participant who has submitted minimum price proposal.

To receive the invitation of the request for quotation in hard copy it is required to apply to the Client on the 6th day as from the day of publication of the announcement, at 11:00. To receive an invitation in a hard copy it is necessary to send a written request to the Client. The Client ensures the provision of the hard copy free of charge within the working day following day of the receipt of such request.

In case of getting a request for providing the invitation electronically, the Client shall ensure the provision of invitation electronically within the working day following the day of receipt of such a request.

Not getting an invitation in the prescribed order shall not restrict the right of the participant to participate in this procedure.

The bids for the request for quotation should be submitted electronically via www.armeps.am system on the 7th day as from the day of publication of the announcement, at **11:00**. The bids can be submitted in English and Russian, besides Armenian.

The bid opening will be carried out electronically via www.armeps.am system on the 7th day as from the day of publication of the announcement, at 11:00.

The complaints regarding this procedure should be presented to Procurement Appeals Board at the following address 1, Melik-Adamyan street. The appeal is conducted by the order defined by given invitation for request of quotation. In order to submit a complaint AMD 30 000 is required which should be transferred to the Treasury Account 900008000482 opened by the name of the Ministry of Finance of the Republic of Armenia.

For further information regarding this announcement you can apply to Mrs. Anna Harutyunyan, Secretary of the Evaluation Committee.

Telephone: 29-75-36
E-mail: procurement@healthpiu.am

**Client: ''Radioisotope production center'' CJSC**

**ОБЪЯВЛЕНИЕ**

**О Запросе Котировки**

**Данный текст объявления утвержден решением комиссии по запросу котировки N 2**
**От 3 августа, 2017 года и публикуется согласно статье 27 закона РА "О закупках".**

**Код запроса котировки:** ԻԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02

Заказчик– ЗАО "Центр производства изотопов", который находится по адресу г. Ереван, ул. Алабяна 38/7, объявляет запрос котировки, который осуществляется одним этапом посредством системы электронных закупок Armeps (www.armeps.am).

Отобранному участнику запроса котировки в установленном порядке будет предложено подписать контракт по **обслуживанию вентилиационной системы** (далее-контракт).

Согласно статье 7 закона РА "О закупках", любое лицо, независимо от того обстоятельства, что оно является иностранным физическим лицом, иностранной организацией либо лицом без гражданства, имеет равное право участия в запросе котировки.

Критерии квалификации, а также предоставляемые документы для их оценки для участников и лиц, не имеющих права на участие в запросе котировки, установлены приглашением данной процедуры.

Отобранный участник определяется из числа участников, представивших получившие удовлетворительную оценку заявки, по принципу дачи предпочтения участнику, представившему минимальное ценовое предложение.

Для получения приглашения запроса котировки в документарной форме необходимо обратиться к заказчику до 11:00ч 6-ого дня, считая со дня опубликования данного объявления. При этом, для получения приглашения в документарной форме необходимо представить заказчику письменное заявление. Заказчик обеспечивает бесплатное предоставление приглашения в документарной форме в первый рабочий день, следующий за получением такого требования.

В случае наличия требования предоставления приглашения в электронной форме заказчик обеспечивает бесплатное предоставление приглашения в электронной форме в течение первого рабочего дня, следующего за получением такого требования.

Неполучение приглашения не ограничивает право участника на участие в данной процедуре.

Заявки запроса котировки необходимо представить в электронной форме посредством системы электронных закупок Armeps (www.armeps.am) до 7-ого дня **в 11:00**, считая со дня опубликования данного объявления. Заявки кроме армянского могут представляться также на английском или русском языках.

Открытие заявок будет осуществляться в электронной форме посредством системы электронных закупок Armeps в 11:00 7-ого дня, считая со дня опубликования данного объявления.

Жалобы относительно данной процедуры предоставляются в Совет по обжалованию закупок по адресу г.Ереван, ул.Мелика-Адамяна 1. Обжалование осуществляется порядком, установленным приглашением данного запроса котировки. Для предоставления жалобы взимается плата в размере 30 000 (тридцать тысяч) драм, которая должна быть переведена на казначейский счет "900008000482", открытый на имя Министерства финансов Республики Армения.

Для получения дополнительной информации относительно данного объявления можете обратиться к секретарю оценивающей комиссии **Анне Арутюнян**.

Телефон 29-75-36

Эл. почта procurement@healthpiu.am

Заказчик- **ЗАО "Центр производства изотопов"**

*Հաստատված է*

*ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02 ծածկագրով*

*գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի*

*2017թ. Օգոստոսի 3-ի N 2որոշմամբ*

*<<Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն>> ՓԲԸ*

# Հ Ր Ա Վ Ե Ր

## <<ՌԱԴԻՈԻԶՈՏՈՊՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ <<ՕԴԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ>> ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ

*Հարգելի մասնակից նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:*

*Միաժամանակ - հայտը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգ (այսուհետ՝ համակարգ) մուտքագրելիս անհրաժեշտ է առաջնորդվել www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում տեղադրված ձեռնարկով.*

*- համակարգի հետ կապված հարցեր և խնդիրներ առաջանալիս անհրաժեշտ է դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն (այսուհետ նաև՝ լիազորված մարմին)՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով (հեռախոս՝(+37410) 28-93-20):*

## ԲՈՎԱՆԴԱԿՈւԹՅՈւՆ

## <<ՌԱԴԻՈՒՀՈՐԻԶՈՆՏՈՊՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ <<ՕԴԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ>> ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀՐԱՎԵՐԻ

## ՄԱՍ I.


1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը
5. Հայտի գնային առաջարկը
6. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը
7. Հայտի ապահովումը
8. Հայտերի բացումը, գնահատումը և արդյունքների ամփոփումը
9. Պայմանագրի կնքումը
10. Պայմանագրի ապահովումը
11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը
12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը


## ՄԱՍ II. ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՅՏԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳ


1. Ընդհանուր դրույթներ
2. Ընթացակարգի հայտը
3. Հավելվածներ 1-9

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն ՌԱԿ-ԳՀԾԶԲ-2017/02 ծածկագրով անցկացվող գնանշման հարցման (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի <<Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն>> ՓԲԸ-ի (այսուհետ՝ պատվիրատու) կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետ՝ մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել համակարգում գրանցված բոլոր անձիք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Համակարգում որպես մասնակից գրանցվելու նպատակով անձը մուտք է գործում www.armeps.am հասցեով գործող ինտերնետային կայք և լրացնում համապատասխան պահանջվող տեղեկատվությունը, որից հետո գրանցումը հաստատելու նպատակով էլեկտրոնային փոստի միջոցով ստացված թվի և (կամ) տառերի կոմբինացիան մուտքագրում է համակարգ: Նշված տեղեկատվությունը ճիշտ մուտքագրելուց հետո անձը համարվում է համակարգում գրանցված մասնակից, ինչի մասին ավտոմատ եղանակով ստանում է ծանուցում: Մասնակցի գրանցումն ավտոմատ եղանակով համարվում է չեղյալ, եթե համակարգում գրանցվելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում վերջինս մուտք չի գործում համակարգ կամ մուտք է գործում, սակայն համակարգ չի մուտքագրում տեղեկատվությունը: Այս պարագայում իրականացվում է գրանցման նոր գործընթաց:

Համակարգում մասնակցի գրանցման գործընթացը նկարագրված է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում տեղադրված ձեռնարկում:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ procurement@healthpiu.am

# ՄԱՍ I

## 1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1 Գնման առարկա է հանդիսանում <<Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն>> ՓԲԸ-ի կարիքների համար՝ <<Օդափոխման համակարգի սպասարկման ծառայությունների>> ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ծառայություն), որոնք խմբավորված են 1 չափաբաժնում՝

| *Չափաբաժինների համարները* | ***Չափաբաժնի անվանումը*** |
|---|---|
| 1 | Օդափոխման համակարգի սպասարկման ծառայություններ |

Ծառայության տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 5 հավելվածում:

*Սույն հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները*

<<Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում>> լիցենզիա, ըստ հետևյալ ոլորտի

| *Չափաբաժինների համարները* | *Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).* |
|---|---|
| *1* | *2* |
| *1* | *Էներգետիկ ոլորտում* |

## 2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.2 Մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.2 կետով նախատեսված գրավոր հայտարարություն: Բացի սույն կետով նախատեսված հայտարարությունից մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակցից, այդ թվում ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր կամ հիմնավորումներ չեն կարող պահանջվել: Մասնակցի հայտարարության իսկությունը գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով:

2.3 Արգելվում է սույն կետով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին,

բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Կարգի 119-րդ կետի իմաստով՝

1) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից,

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելին տնօրինող մասնակից.

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ.

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ.

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ էական ազդեցություն ունի.

3) ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տասը և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները.

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն.

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ.

դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

Սույն կետի իմաստով ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները:

2.4 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

2.5 Մասնակցին ներկայացվող՝

1) <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում Օդափոխման համակարգի սպասարկման ծառայությունների մատուցված լինելը:

բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը.

2) <<Տեխնիկական միջոցներ>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը.

3) <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը.

4) <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

բ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պահանջը:

2.6 Սույն ընթացակարգի շրջանակում կնքվելիք պայմանագիրը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցը:

2.7 Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

2) համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ: Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում՝ հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը.

3) Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

## 3. ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ համակարգի միջոցով հանձնաժողովից պահանջելու հրավերի պարզաբանում: Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է համակարգի միջոցով՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

3.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը պարզաբանումը տրամադրելու օրը հրապարակվում է համակարգում և www.procurement.am հասցեով գործող տեղեկագրի (այսուհետ՝ տեղեկագիր) «Գնումների հայտարարություններ» բաժնի «Հրավերների պարզաբանումների վերաբերյալ հայտարարություններ» ենթաբաժնում՝ առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է սույն հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում համակարգում և տեղեկագրում :

3.5 Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին համակարգում և տեղեկագրում հայտարարության հրապարակման օրվանից: Այդ դեպքում մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած հայտի ապահովման վավերականության ժամկետը կամ ներկայացնել հայտի նոր ապահովում:

## 4. ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով հանձնաժողովին ներկայացնում է հայտ: Հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Մասնակիցը կարող է հայտ ներկայացնել միայն ամբողջ չափաբաժնի համար:

Հայտը ներկայացվում է մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Հայտի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի 2-րդ մասում՝ գնանշման հարցման հայտերը պատրաստելու հրահանգում:

4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել համակարգի միջոցով ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված «7»րդ օրվա ժամը 11:00-ն: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում համակարգի կողմից:

4.3 Մասնակիցը հայտով ներկայացնում է՝

1) գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը և էլեկտրոնային փոստի հասցեն,

2) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

3) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

4) իր կողմից հաստատված գնային առաջարկ.

5) հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է կանխիկ փողի ձևով, ապա հայտով ներկայացվում է անխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը.

6) սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը

7) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

8) իր կողմից հաստատված հայտարարություն՝ սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

9) այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն ենթակետում մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը, որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում.

10) գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով:

11) համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով):

4.4 Սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

4.5 Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

## 5. ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ

5.1 Առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

5.2 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե

մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

5.3 Եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

## 6. ՀԱՅՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՀԱՅՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6.1 Օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

6.2 Օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցը, մինչև սույն հրավերի 1-ին մասի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

## 7. ՀԱՅՏԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

7.1 Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466>> գանձապետական հաշվին, որը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

7.2 Մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից.

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ Մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է սույն ընթացակարգի հետագա մասնակցությունից:

7.3 Հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

## 8. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

8.1 Հայտերի բացումը կկատարվի համակարգի միջոցով՝ սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը համակարգում հրապարակվելու օրվանից հաշված «7»րդ օրվա ժամը 11:00-ին:

Հայտերի բացման նիստում հանձնաժողովի նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

Համակարգում հանձնաժողովի բացող անդամների գործառույթներն աստիճանակարգված են: Աստիճանակարգումը որոշվում է հանձնաժողովի նախագահի կողմից: Հանձնաժողովի առաջին բացող անդամն իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացնում բացման ենթակա այն

հայտերի ցուցակը, որոնց համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատում է իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնվում է հայտերի բացման մասին արձանագրությունը (համակարգում՝ հաշվետվություն), որը հայտերի բացման օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ուղարկում է մասնակիցների էլեկտրոնային փոստերին:

8.2 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

8.3 Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման նպատակով հանձնաժողովի նախագահն ավտոմատ եղանակով ստեղծում է հայտերի գնահատման մասին արձանագրություն, որը համակարգում հաստատվում է հանձնաժողովի անդամների կողմից՝ համակարգում նշում կատարելու միջոցով:

8.4 Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելիս գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 1-ին մասի 5.2-րդ կետում նշված հարկի գումարի հաշվարկման, իսկ հայտերը գնահատելիս հիմք է ընդունում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

8.5 Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ ՀՀ Կենտրոնական բանկի՝ հայտերի բացման օրվա փոխարժեքով:

8.6 Հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված՝ սույն հրավերի 1-ին մասի 8.1 կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ.

2) Օրենքով նախատեսված այլ դեպքերի:

8.7 Հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին համակարգի միջոցով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար հատկացված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների համար

գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

8.8 Պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի, ներառյալ գնային առաջարկի պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին: Պահանջի կատարման անհնարինության դեպքում պահանջ ներկայացրած անձին անհապաղ տրամադրվում է բնօրինակ փաստաթղթերը, որոնց վերջինս ծանոթանում է տեղում, իրավունք ունի լուսանկարել դրանք և վերադարձնում է հանձնաժողովի քարտուղարին նիստի ընթացքում՝ առանց խոչընդոտելու հանձնաժողովի բնականոն գործունեությանը:

8.9 Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

8.10 Եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

8.11 Հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը չի կարող մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին, եթե հայտերի բացման նիստում պարզվում է, որ վերջիններիս կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը, կամ իրենց մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը տվյալ ընթացակարգին մասնակցելու համար ներկայացրել է հայտ: Եթե առկա է սույն կետով նախատեսված պայմանը, ապա հայտերի բացման նիստից անմիջապես հետո տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը ինքնաբացարկ է հայտնում տվյալ ընթացակարգից:

8.12 Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.13 Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝

1) հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում.

2) իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակում է տեղեկագրում: Հանձնաժողովի այն անդամները, որոնք հանձնաժողովի աշխատանքների մասնակցում են հայտերի բացման նիստից հետո հրավիրվող նիստերին, ստորագրում են սույն ենթակետում նախատեսված հայտարարությունները, որոնք տեղեկագրում քարտուղարը հրապարակում է ստորագրմանը հաջորդող աշխատանքային օրը.

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին[1].

8.14 Կոմիտեն սույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է

[1] *Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով չի գնահատվում:*

իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

8.15 Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն հրավերի 8.14-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

8.16 Սույն հրավերի 1-ին մասի 8.14 կետով նախատեսված՝ կոմիտեից տեղեկատվության տրամադրման վերջնաժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերն հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

8.17 Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա լինել հանձնաժողովի նիստերին: Մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

8.18 Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

***Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:***

8.19

Սույն հրավերի 1-ին մասի 8.16 կետով նախատեսված փաստաթուղթը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում հանձնաժողովը գնահատում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության համապատասխանությունը հրավերի պահանջներին: Եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մասնակցության իրավունքը գնահատվում է բավարար, ապա վերջինս հայտարարվում է ընտրված մասնակից:

Եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի մասնակցության իրավունքը գնահատվում է անբավարար, հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.18-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

8.20 Ընտրված մասնակցի կողմից պայմանագիրը չկնքելու (հրաժարվելու) կամ պայմանագիր կնքելու իրավունքից զրկվելու դեպքում հանձնաժողովը ընտրված մասնակցի որոշման նպատակով կիրառում է սույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.19-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

8.21 Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

8.22 Մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության

ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

8.23 Սույն հրավերի 1-ին մասի 8.22 կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:

8.24 Ընտրված մասնակցին որոշելու նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

1) Համակարգում նշում է ընթացակարգի բավարար գնահատված մասնակիցներին՝ նրանց դասակարգելով ըստ գնահատման արդյունքների և գնային առաջարկների.

2) Համակարգի միջոցով ընթացակարգի մասնակիցների էլեկտրոնային փոստին ուղարկում է գնահատման արդյունքների մասին հանձնաժողովի նիստի արձանագրությունը:

8.25 Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ:

8.26 Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում 5 օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

9.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

9.2 Սույն հրավերի 1-ին մասի 8.26 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն հրավերի 1-ին մասի 8.26 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

9.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

9.4 Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

9.5 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Ընդ որում ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

9.6 Պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկը ստացած ընտրված մասնակիցը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը:

9.7 Մինչև սույն հրավերի 1-ին մասի 9.5 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

9.8 Պայմանագիրը կնքվելուն հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգում ավարտում է ընթացակարգը:

## 10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

10.1 Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

10.2 Պայմանագրի ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ողջ ծավալով կատարման վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ: Պայմանագրի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրով ստանձնված պարտավորությունները ողջ ծավալով կատարվելուն հաջորդող տաս աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդ որում պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000474» գանձապետական հաշվին: Պայմանագրի ապահովումը միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով ներկայացվելու դեպքում այն ներկայացվում է հավելված N 9-ով սահմանված ձևին համապատասխան

## 11. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

11.1 Օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը: Ընդ որում պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա:

3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

4) պայմանագիր չի կնքվում:

11.2 Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում, պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

## 12. ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ (ԿԱՄ) ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՄԱՍՆԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԳԸ

12.1 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

12.2 Գնումների, այդ թվում բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

12.3 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին՝ գրավոր դիմում ներկայացնելով՝ աշխատանքային օրերին և ժամերին, ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1 հասցեով,

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

12.4 Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝

1) պայմանագիր կնքելու որոշումը, ապա գնումների բողոքարկման խորհուրդ բողոքը ներկայացնում է սույն հրավերի 1-ին մասի 8.28-րդ կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում.

2) գնման առարկայի բնութագրերը կամ հրավերի պահանջները, ապա գնումների բողոքարկման խորհուրդ բողոքը ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալը:

12.5 Գնումների բողոքարկման խորհրդին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անվանումը (անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի պատճենը) և հասցեն.

2) պատվիրատուի անվանումը և հասցեն.

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.

4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը: Ընդ որում՝ բողոքարկման վճարի չափը կազմում է 30 հազար ՀՀ դրամ, որը վճարվում է ՀՀ պետական բյուջե՝ այդ նպատակով լիազորված մարմնի անվամբ բացված «900008000482» գանձապետական հաշվին:

7) այն բանկի անվանումը և հաշվեհամարը, որին բողոքը բավարարվելու դեպքում պետք է հետ փոխանցվի վճարը.

8) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

12.6 Բողոքը բավարարվելու մասին բողոքարկման խորհրդի կողմից կայացված որոշումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող աշխատանքային օրը տվյալ բողոքը քննած և որոշում կայացրած բողոքարկման խորհրդի անդամը գրավոր լիազորված մարմնին է տրամադրում բողոքարկման վճարը կատարած լինելը հավաստող փաստաթղթի պատճենը և այն բանկի անվանումը և հաշվեհամարը, որին պետք է փոխանցվի հետ վերադարձվող գումարը: Լիազորված մարմինը սույն կետում նշված փաստաթղթի պատճենը ստանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրը ընթացքում բողոքարկման վճարը հետ է փոխանցում այն վճարած անձին՝ ներկայացված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

12.7 Եթե բողոքը չի բավարարում Օրենքի 50-րդ հոդվածի պահանջները, ապա բողոքն ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում խորհուրդն այդ մասին գրավոր տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու երկու աշխատանքային օր ժամկետ: Ընդ որում, եթե սույն հրավերի 1-ին մասի 12.4 կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետում ներկայացված բողոքը չի բավարարել Օրենքի 50-րդ հոդվածի պահանջները, ապա սույն կետով սահմանված ժամկետում շտկված և խորհուրդ ներկայացված բողոքը համարվում է սահմանված ժամկետում ներկայացված:

12.8 Օրենքի 50-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ բողոք ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում խորհուրդը դիմում է պատվիրատուին՝ տվյալ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը խորհուրդ ներկայացնելու պահանջով: Սույն կետում նշված փաստաթղթերը պատվիրատուն խորհուրդ ներկայացնում է նման պահանջ ստանալու օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում:

12.9 Բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա լինելու խորհրդի նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

12.10 Բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 20 օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդի պատճառաբանված որոշմամբ սույն կետով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 10 օրացուցային օրով: Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

12.11 Խորհուրդը՝

1) իրավունք ունի պատվիրատուի և հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

2) որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին.

3) հաշվառում է խորհրդի կողմից ընդունված որոշումները և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն:

12.12 Գնումների բողոքարկման խորհրդի կողմից բողոքը բավարարվելու դեպքում պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոքը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար:

12.13 Բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

12.14 Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով

համանման բողոք: Օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

12.15 Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն այն կայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում խորհուրդը հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

12.16 Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել պատվիրատուի, հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի կատարած գործողության կամ անգործության հետևանքով , իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

12.17 Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով և սույն հրավերի 12.13-րդ կետով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Խորհրդի որոշմամբ կասեցումը կարող է հանվել, եթե պատվիրատուի ներկայացրած հիմնավորումների համաձայն, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը: Սույն կետով նախատեսված որոշումը խորհուրդը հրապարակում է տեղեկագրում՝ այն կայացնելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

# ՄԱՍ II
# Հ Ր Ա Հ Ա Ն Գ
# Գ Ն Ա Ն Շ Մ Ա Ն   Հ Ա Ր Ց Մ Ա Ն   Հ Ա Յ Տ Ը   Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ե Լ Ո Ւ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել մասնակիցներին հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ

Ընթացակարգին մասնակցելու համար մասնակիցը համակարգի միջոցով ներկայացնում է հայտ: Հայտին կցվում են սույն հրավերով նախատեսված համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները)՝ սույն հրավերի 1-ին մասի 8.18 կետով սահմանված կարգով:

Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝

**1) «Պիտանելիության չափորոշիչ».**

2.1 ընթացակարգին մասնակցելու դիմում՝ համաձայն հավելված N 1-ի.

2.2 հայտարարություն սույն հրավերի 1-ին մասի՝ 2.2 կետով նախատեսված մասնակցության իրավունքի պահանջներին բավարարելու և 4.3 կետի 7-րդ և 8-րդ ենթակետերով նախատեսված պահանջների բացակայության մասին՝ համաձայն հավելված N 2-ի, ինչպես նաև նույն կետի 9-րդ ենթակետով նախատեսված անձանց մասին տեղեկատվություն՝ համաձայն հավելված N 2.1-ի.

2.3 հայտի ապահովում: Միակողմանի հաստատված հայտարարությունը՝ տուժանքը, ներկայացվում է հավելված N 8-ով սահմանված ձևին համապատասխան:

Հայտի ապահովումը կանխիկ փողի ձևով ներկայացվելու դեպքում, հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը:

**2) «Տեխնիկական չափորոշիչ»**.

2.4 հայտարարություն՝ սույն հրավերի 1-ին մասի 2.5-րդ կետով նախատեսված որակավորման չափանիշներին (մասնագիտական փորձառություն, պայմանագրի կատարման համար անհրաժեշտ՝ աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական և ֆինանսական միջոցներ) իր համապատասխանության մասին համաձայն հավելված N 3-ի.

2.5 Սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը

2.6 գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

2.7 համատեղ գործունեության պայմանագիրը, եթե մասնակիցները գնման ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով).[2]

**3) «Ֆինանսական չափորոշիչ»**.

2.8 գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 4-ի: Գնային առաջարկը ներկայացվում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

---

[2] *Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից:*

**Հավելված N 1**
**«ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02» ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

# ԴԻՄՈՒՄ
## գնանշման հարցմանը մասնակցելու

______________________________________________ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել

մասնակցի անվանումը

<<Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն>> ՓԲԸ-ի կողմից «ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02» ծածկագրով հայտարարված

պատվիրատուի անվանումը

գնանշման հարցման ____________________________ չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի

չափաբաժնի (չափաբաժինների) համարը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

___________________________________________-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է

մասնակցի անվանումը

__________________________________________ռեզիդենտ:

երկրի անվանումը

_____________________-ի հարկ վճարողի հաշվառման համարն է՝ ____________________________:

մասնակցի անվանումը

հարկի վճարողի հաշվառման համարը

___________________________ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ __________________________:

մասնակցի անվանումը

էլեկտրոնային փոստի հասցեն

______________________________________________ ______________________

Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը)

Կ. Տ.[3]

[3] *սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:*

**Հավելված 2**
**«ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02» ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**
**մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին**

Սույնով _______________________________________________-ն հայտարարում և հավաստում է, որ
մասնակցի անվանումը

բավարարում է «ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Միաժամանակ _______________________________________________ -ն
մասնակցի անվանումը

1) հայտնում և հավաստում է, որ «ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու շրջանակում՝

ա. թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

բ. բացակայում է գնանշման հարցման հրավերով սահմանված՝ _____________________-ին
մասնակցի անվանումը

փոխկապակցված անձանց և (կամ) _______________________________________________-ի
մասնակցի անվանումը

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոսը _____________________________-ին
մասնակցի անվանումը

պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք,

2) կից ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)**:

_______________________________________________ _______________
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրություն

Կ. Տ.[4]

---

[4] *սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:*
*** Սույն ենթակետում նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է մասնակցի գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:*

**Հավելված 2.1**
**«ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02» ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

# ՏՎՅԱԼՆԵՐ
## մասնակցի իրական շահառուների մասին

| h/h | Անունը Ազգանունը Հայրանունը | ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը | Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |

________________________________________ -ն հավաստում է, որ իրական շահառուների մասին
մասնակցի անվանումը
ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ:

________________________________________ _______________
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրություն

Կ. Տ.[5]

[5] *սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:*

**Հավելված 3**
**«ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02» ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
**որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին**

Սույնով _________________________________________________-ն հայտարարում և հավաստում է, որ
մասնակցի անվանումը

բավարարում է «ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

____________________________________________________ ________________
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ.[6]

---

[6] *Սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:*

**Հավելված 4**
**«ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02» ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

# Գ Ն Ա Յ Ի Ն   Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով «ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, ______________________________________________________-ն առաջարկում է

մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

| **Չափա-բաժինների համարները** | **Ծառայության անվանումը** | **Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/** | **ԱԱՀ** /տառերով և թվերով/** | **Ընդհանուր գինը /տառերով և թվերով/** |
|---|---|---|---|---|
| ***1*** | ***2*** | ***3*** | ***4*** | ***5=3+4*** |
| **1** | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>> | | | |
| **2** | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>> | | | |
| **3** | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>> | | | |
| **...** | ... | | | |
| **...** | ... | | | |

______________________________________________________    ________________

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)    ստորագրությունը

Կ. Տ.[7]

---

*[7] սույն հավելվածը չի կնքվում, եթե այն հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:*

***եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

**Հավելված 5**
**«ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02» ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԴԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02»

ք. ______ «___» ______ 2017թ.

<<Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Ռոստոմյանի, որը գործում է ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ------------------ն, ի դեմս տնօրեն -- ----------------------ի, որը գործում է ------------------- կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Օդափոխման համակարգի սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Յանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ______ (____տառերով_______________________________________ ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[8]:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

---

[8] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

**5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի  կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն  իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[9]:

7.7 Եթե պայմանագիրն  իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[10]:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.2-N1.6, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

---

[9] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[10] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

<<Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն>> ՓԲԸ
ք.Երևան, Հալաբյան 38/7
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 15700-12683490100
ՀՎՀՀ 02596604
տնօրեն Ա.Ռոստոմյան

----------------------------------

(ստորագրություն)

**Կ.Տ**

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

--------------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման<br>հասցեն | մատուցման<br>ժամկետը** |
| 1 | 71311380 | Կենտրոնի օդափոխության և օդորակման համակարգի (Հավելվածներ 1.2-1.6) շուրջօրյա անխափան աշխատանքը ապահովելու նպատակով  անհրաժեշտ է կատարել համակարգի շաբաթական սպասարկում, նշելով  համակարգի հիմնական  սարքավորումների սպասարկման համար անհրաժեշտ գործողությունները և դրանց իրականացման հաճախականությունը  ըստ արտադրողի ներկայացրած պահանջների, գրանցել իրականացված  գործողությունները համապատասխան գրանցամատյաններում: Արտադրական տարածքի մշտադիտարկման համակարգի  միջոցով համեմատել տարածքների ջերմաստիճանի, խոնավության և ճնշումների տարբերությունների ցուցանիշները հաստատված հատկորոշիչների հետ: Շեղումներ հայտնաբերելու դեպքում  անհրաժեշտ է լրացնել  շեղման արձանագրություն և վերացնել համակարգի շեղումները: Պահեստամասերի փոփոխման անհրաժեշտության դեպքում պետք է ժամանակին պատվիրել  և փոխել համապատասխան պահեստամասը  Կենտրոնի միջոցներով, այլ պարագայում Կենտրոնի կրած վնասի պատասխանատվությունը դրվում է կատարող կողմի վրա: Ըստ հաստատված ժամանակացույցի  փոխել օդի հատուկ զտիչները: Համակարգի  հետ կապված ցանկացած գործողություն հետ կապված կազմել արձանագրություն, ստուգել  և հաստատել կատարված գործողությունների արդյունավետությունը:<br>Համակարգի հիմնական  սարքավորումների  մակնիշներն  ու բնութագրերը բերված են ստորև՝ | Դրամ | | 1 | Ք.Երևան Հալաբյան3 8/7 | Պայմանագրի կնքման օրվանից 4 ամիս |

| | Սարքավորում | Արտադրող կոնցեռն | Մակնիշ | Քանակ | Տեխնիկական տվյալներ | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Օդի սառեցման չիլլերներ | Trane | CGAMM100E1N01 | 2 հատ | A max - 102A<br>Kw max - 60 Կվ<br>V-400/Hz-50/Ph-3<br>BP-LP -  31 բար<br>HP-HP - 44.5բար | 1 |
| 2 | Չիլլերներ արտաքին սառեցման բլոկով՝ նախատեսված ցիկլոտրոնի տեխնոլոգիական պրոցեսի ապահովման համար | Trane | ECCUN225 | 2 հատ | A max - 70A<br>V-400/Hz-50/Ph-3<br>BP-LP -  20 բար<br>H20 - 10 բար<br>HP-HP - 29.5 բար | 2 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 3 | Օդափոխության ներածման սարքեր ANU-1; ANU-2 նախատեսված հատուկ սենյակներում համար, յուրաքանչյուր սենյակի համար 4 անհատական պարամետրերով՝ տարբեր խոնավությամբ և օդի ճնշմամբ/ -40Pa մինչև +45Pa | Euroklima | ZHK-2000S | 2 հատ | Չափ՝ 15/9<br>Օդի ծավալ՝ 10.300$m^3$/h<br>Ճնշման արտաքին անկում՝ 500 Pa<br>Ճնշման ընդհանուր անկում՝ 844 Pa | 3 | | | | | |
| | | 4 | Օդափոխության ներածման սարքեր ANU-3 | Euroklima | ZHK-2000S | 1 հատ | Չափ՝ 6/6<br>Օդի ծավալ՝ 5.300 մ$^3$/ժ<br>Ճնշման արտաքին անկում՝ 555 Պա<br>Ճնշման ընդհանուր անկում՝ 702 Պա | 4 | | | | | |
| | | 5 | Օդափոխության ներածման սարքեր | Euroklima | ZHK-2000S | 2 հատ | Չափ՝ 6/4.5<br>Օդի ծավալ՝ 4.090 մ$^3$/ժ<br>Ճնշման արտաքին անկում՝ 574 Պա<br>Ճնշման ընդհանուր անկում՝722 Պա | 5 | | | | | |
| | | 6 | Օդորակիչներ տարբեր տեխնոլոգիական կարիքների համար | Midea | MDV | 4 հատ | 200 W/DRM-1 | 6 | | | | | |
| | | 7 | Օդի հատուկ զտիչներ | General Filter | HGP14242H | | Արդյունավետություն՝ ≥99.995 %<br>Հոսքի նոմինալ արագություն՝ 4000 մ$^3$/ժ<br>Դաս՝ H14<br>Ճնշման ներքին անկում՝ 290 Պա | 7 | | | | | |
| | | 8 | Հատուկ արտածման զտիչներ | Mokk-vent | HFK+HPF+ACF | 5 հատ | Օդի ծավալ՝ 5300 մ$^3$/ժ, 4090 մ$^3$/ժ և 10390 մ$^3$/ժ | 8 | | | | | |

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ փարվա դեկտեմբերի 15-ը:*

ՀԱՎԵԼՎԱԾ 1.2







**Legend**

- +45Pa
- +30Pa
- +15Pa
- 0Pa
- Atmospheric pressure
- Equipment out of IBA scope
- −15Pa
- −30Pa
- −60Pa
- Min −60Pa
- Controlled area

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| B | 10/09/12 | Room 1105, 1124, 1105 | RDW | VPETRY | JGE |
| A | 27/07/12 | Original issue | RDW | VPETRY | JGE |
| REV: | DATE: | MODIFICATION: | DESIGNED/DRAWN | CHECKED BY: | VALIDATED BY: |

PROJECT: CYCLONE® 18
S/PROJECT: Yerevan Armenia

TITLE: Pressure cascade

S.A. ION BEAM APPLICATIONS

THIS DOCUMENT IS THE PROPERTY OF I.B.A. AND SHALL NOT BE ALTERED COPIED OR COMMUNICATED WITHOUT THE WRITTEN CONSENT OF I.B.A.

MATERIAL: –
SCALE: –
DIMENSIONS: mm
TOLERANCES: –

DWG. Num. : 07 38 80 0030 | SHEET : 1/1 | REV : B

ՀԱՎԵԼՎԱԾ 1.3


CYCLOTRON FACILITY
CYCLONE 18
ARMENIA
MAIN LEVEL
AIR CONDITIONING
C

ՀԱՎԵԼՎԱԾ 1.4




| REVISION | DATE | MODIFICATIONS |
| --- | --- | --- |
| G | | |
| F | | |
| E | | |
| D | | |
| C | [illegible] | Drawing after IBA control |
| B | [illegible] | Various modifications |
| A | [illegible] | Original drawing |

CYCLOTRON FACILITY

PROJECT:

CYCLONE®18
ARMENIA

IBA ION BEAM APPLICATIONS

This document is the Property of IBA and shall not be altered, copied, or communicated without the written consent of IBA

TECHNICAL LEVEL

TITLE:

AIR CONDITIONING

| SCALE | DATE | PLAN NR | REVISION |
| --- | --- | --- | --- |
| - | 2013/06/15 | HVAC - 02 | C |


Basement
CYCLOTRON FACILITY
PROJECT:
CYCLONE®18
ARMENIA
IBA
This document is the Property of IBA and shall not be altered, copied, or communicated without the written consent of IBA.
BASEMENT
TITLE:
AIR CONDITIONING
SCALE
DATE
PLAN NR
REVISION
-
HVAC - 03
B

ՀԱՎԵԼՎԱԾ 1.6



*Հավելված N 2*
*«        »                2017թ. կնքված*
*«ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02» ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| 1 | 71311380 | Օդափոխման համակարգի սպասարկում | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | | | - | - | - | - | - | - | - | - | 25% | 50 % | 75% | 100 % | 100 % |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

<<Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն>> ՓԲԸ
ք.Երևան, Հալաբյան 38/7
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 15700-12683490100
ՀՎՀՀ 02596604
տնօրեն Ա.Ռոստոմյան

--------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված 3*
*«        »        2017թ. կնքված*
*«ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02»   ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________
______________________
գտնվելու վայրը ____________
հհ ______________________
______________________
հվհհ ____________________

Պատվիրատու
<<Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն>> ՓԲԸ
ք.Երևան, Հալաբյան 38/7
հհ15700-12683490100
հվհհ 02596604

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<   >> <<                    >> *2017թ*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԴԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ *«ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02»*
*Պատվիրատուն՝ ի դեմս <<Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրեն Ա.Ռուստոմյանի և*
Պայմանագրի կողմը՝ ի դեմս________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 2017թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի / |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«     »          2017թ. կնքված*
*«ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02»   ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ <<Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն>> ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ______________-ի
Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 2017 թ. ______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը    պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

Հավելված 6
«ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՀԱՐՑՈՒՄ
ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման"
կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների ճշտման մասին

<<Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն>> ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված <<ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20 _____ թվականի -ի N ______որոշմամբ 1-ին տեղ է զբաղեցրել ներքոհիշյալ մասնակիցը (մասնակիցները)՝

| N | Մասնակցի | | |
|---|---|---|---|
| | անվանումը | հարկ վճարողի հաշվառման համարը | հայտը ներկայացվելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը |
| | | | |
| | | | |

Խնդրում ենք ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 44-րդ կետով սահմանված ժամկետում տրամադրել տեղեկատվություն 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ նույն կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների վերաբերյալ:

<<ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02>> ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Ա.Հարությունյան
ընթացակարգի ծածկագիրը անունը, ազգանունը ստորագրություն

_____ ___________ 20 թ.

Հավելված 7
«ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման"
կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված հարցման մասին

| Ընթացակարգի ծածկագիրը | Պատվիրատուի անվանումը | Մասնակցի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | անվանումը | հարկ վճարողի հաշվառման համարը | հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափը/ՀՀ դրամ | հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը/ՀՀ դրամ | | | | հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հավեկշռային արժեքը/ՀՀ դրամ | |
| | | | | | | | | | ակտիվներ | պարտավորություն |
| | | | | | 20..թ. | 20..թ. | 20..թ. | Ընդամենը | | |
| | | | | | | | | | | |

Տեղեկատվությունը տրվել է ____________________ վարչության աշխատակից ____________________-ի կողմից ____________________

վարչության անվանումը — անունը, ազգանունը — ստորագրություն

*Հավելված 8*
*«ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02» ծածկագրով*
*գնանշման հարցման հրավերի*

**ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(հայտի ապահովում)**

ք. Երևան «_____»__________________ 20 թ.**

________________________, ի դեմս Ընկերության տնօրեն ____________________________________________
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները

որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

**1. Համաձայնության առարկան**

1.1 Ընկերությունը մասնակցում է <u><<Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն>> ՓԲԸ-ի</u> (այսուհետ՝ Պատվիրատու)
պատվիրատուի անվանումը
կողմից կազմակերպված՝ *«ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02»* ծածկագրով գնման ընթացակարգին:

Որպես մասնակցության հայտի ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.2 Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները («Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մաս) չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.3 Բանկը մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և Ընկերության կողմից գնման ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.4 Բանկի կողմից մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.5 Սույն համաձայնագիրը և կից մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է գնման ընթացակարգին մասնակցելու հայտը Ընկերության կողմից ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

____________________________________
ընկերության անվանումը

____________________________________
ընկերության հասցեն

____________________________________
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

____________________________________
ընկերության բանկային հաշվեհամարը

____________________________________
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

____________________________________
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ[11]

*** լրացվում է մասնակցի կողմից*

[11] *Ոչ պարտադիր էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու դեպքում*

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[12] N**

*(մասնակցության հայտի ապահովում)*

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝

4. Վճարողի բանկը՝

5. Վճարողի հաշվի համարը՝

6. Վճարողի ՀՎՀՀ՝

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝<<**Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն**>> **ՓԲԸ**

9. Շահառուի ՀՎՀՀ՝ **02596604**

10. Շահառուի բանկը՝ **Ամերիաբանկ ՓԲԸ**

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ **15700-12683490100**

12. Գումարը թվերով և բառերով՝

13. Արժույթը (բառերով և կոդով)՝

14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ **Հայտի ապահովում**

15.Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ **ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02**

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

| | |
|---|---|
| 19.ա. Շահառուի ստորագրությունները՝<br>/____________________/<br>/____________________/<br>19.բ. Կ.Տ. | 18.ա.<br>Վճարողի ստորագրությունները՝<br>/____________________/<br>/____________________/<br>18.բ. Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br>20.ա. /____________________/<br>/ստորագրություն/<br>20.բ. Կ.Տ.<br>"___" ___ 20___ թ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>21.ա.<br>/____________________/<br>/ստորագրություն/<br>21.բ. Կ.Տ.<br>22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

[12] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

**Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգը**

| Հ/Հ | **<<Վճարման պահանջագիր>> փաստաթղթի վավերապայմանները** | **Նշված դաշտի/ վավերապայմանի առկայությունը փաստաթղթում** | **Վավերապայմանի լրացման պահանջը** | **Վավերապայմանը լրացնող կողմը՝ շահառուն կամ վճարողը** |
|---|---|---|---|---|
| **1** | **2** | **3** | **4** | **5** |
| 1. | վճարման պահանջագրի համարը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս |
| 2. | ներկայացման ամսաթիվը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը |
| 3. | վճարող | պարտադիր | պարտադիր լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության | լրացվում է վճարողի կողմից |
| 4. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (վճարողի բանկը) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 5. | վճարողի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 6. | վճարողի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված | լրացվում է վճարողի կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու | |
| 7. | վճարողի ՀԾՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ | լրացվում է վճարողի կողմից |
| 8. | շահառու | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառու հանդիսացող անձի (վճարումը ստացողի) անվանումը: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 9. | շահառուի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 10. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (շահառուի բանկը) | պարտադիր | պարտադիր | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 11. | շահառուի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուի այն բանկային հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 12. | գումարը (թվերով և բառերով) | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 13. | արժույթը (բառերով և կոդով) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 14. | գործարքի նպատակը | պարտադիր | պարտադիր | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 15. | գնման ընթացակարգի ծածկագիրը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է պահանջագրի ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի համարը կամ գնման ընթացակարգի ծածկագիրը | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 16. | փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և | լրացվում է շահառուի կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | տրամադրման պայմանները | | շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին, ինչպես նաև նշվում են վճարողին փաստաթղթերի տրամադրման պայմանները (տրամադրում՝ վճարի դիմաց, տրամադրում՝ ակցեպտի դիմաց, տրամադրում՝ երաշխիքի դիմաց և այլն) | |
| 17. | առդիր էջերի քանակը | պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է պահանջագրին կից ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, որոնք պետք է տրամադրվեն վճարողին | լրացվում է շահառուիկողմից |
| 18.ա. | վճարողի ստորագրությունը | պարտադիր | ոչ պարտադիր այս դաշտը չի լրացվում, եթե վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված պայմանագրով սահմանվել են այն դեպքերը, երբ վճարողը նախապես տալիս է իր համաձայնությունը/լիազորում է ֆինանսական կազմակերպությանը (մասնաճյուղին) կատարել վճարումներ՝ գանձելով այդ գումարը հաշվից: Ընդ որում վճարողի կողմից չստորագրվելու դեպքում կից ներկայացվում է նաև վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը: | ստորագրվում է վճարողի կողմից |
| 18.բ. | վճարողի կնիքը | պարտադիր | պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում: Ոչ պարտադիր էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու դեպքում | կնքվում է վճարողի կողմից |
| 19.ա. | շահառուի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր, լրացվում է բանկ ներկայացնելիս | ստորագրվում է շահառուի կողմից |
| 19.բ. | շահառուի կնիքը | պարտադիր | պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում | կնքվում է շահառուի կողմից |
| 20.ա. | շահառուին սպասարկող | պարտադիր | ոչ պարտադիր | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | | | |
| 20.բ. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը | պարտադիր | չի լրացվում | |
| 21.ա. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում | |
| 21.բ. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը | պարտադիր | պարտադիր վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում | |
| 22. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | պարտադիր | պարտադիր վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | |

*Հավելված 9*
*«ՌԱԿ-ԳՀԾՁԲ-2017/02»* ծածկագրով*
*գնանշման հարցման հրավերի*

**ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**
**(պայմանագրի կատարման ապահովում)**

ք. Երևան «_____»__________________ 20 թ.**

________________________, ի դեմս Ընկերության տնօրեն ________________________________________________
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները

որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է __________________________________* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը

կազմակերպված՝ ________________________________* ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

________________________________________
ընկերության անվանումը

________________________________________
ընկերության հասցեն

________________________________________
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

________________________________________
ընկերության բանկային հաշվեհամարը

________________________________________
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

________________________________________
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

*** լրացվում է մասնակցի կողմից*

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[13] N**

*(պայմանագրի կապարման ապահովում)*

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝

4. Վճարողի բանկը՝

5. Վճարողի հաշվի համարը՝

6. Վճարողի ՀՎՀՀ՝

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝**<<Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն>> ՓԲԸ**

9. Շահառուի ՀՎՀՀ՝ **02596604**

10. Շահառուի բանկը՝ **Ամերիաբանկ ՓԲԸ**

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ **15700-12683490100**

12.Գումարը թվերով և բառերով՝

13.Արժույթը (բառերով և կոդով)՝

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ **Պայմանագրի կատարման ապահովում**

15.Պայմանագրի ծածկագիրը՝

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը    17. կից՝--- էջ

| | |
|---|---|
| 19.ա. Շահառուի ստորագրությունները<br>/____________________/<br>/____________________/<br>19.բ.<br>Կ.Տ. | 18.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/____________________/<br>/____________________/<br>18.բ. Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br>20.ա. /____________________/<br>/ստորագրություն/<br>20.բ. Կ.Տ.<br>"___" ___ 20___ թ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>21.ա. /____________________/<br>/ստորագրություն/<br>21.բ. Կ.Տ.<br>22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

[13] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

**Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգը**

| Հ/Հ | <<Վճարման պահանջագիր>> փաստաթղթի վավերապայմանները | Նշված դաշտի/ վավերապայմանի առկայությունը փաստաթղթում | Վավերապայմանի լրացման պահանջը | Վավերապայմանը լրացնող կողմը՝ շահառուն կամ վճարողը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | վճարման պահանջագրի համարը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս |
| 2. | ներկայացման ամսաթիվը | պարտադիր | պարտադիր | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը |
| 3. | վճարող | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության:Լրացվում է վճարողի կողմից | լրացվում է վճարողի կողմից |
| 4. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (վճարողի բանկը) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 5. | վճարողի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 6. | վճարողի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու | լրացվում է վճարողի կողմից |
| 7. | վճարողի ՀԾՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված | լրացվում է վճարողի կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ | |
| 8. | շահառու | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառու հանդիսացող անձի (վճարումը ստացողի) անվանումը: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 9. | շահառուի ՀՎՀՀ | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 10. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) անվանումը (շահառուի բանկը) | պարտադիր | պարտադիր | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 11. | շահառուի հաշվի համարը | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուի այն բանկային հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 12. | գումարը (թվերով և բառերով) | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը | լրացվում է վճարողի կողմից |
| 13. | արժույթը (բառերով և կոդով) | պարտադիր | պարտադիր | լրացվում է վճարողի կողմից |
| 14. | գործարքի նպատակը | պարտադիր | պարտադիր | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 15. | պայմանագրի ծածկագիրը (համարը) | պարտադիր | պարտադիր<br>լրացվում է պահանջագրի ներկայացման համար հիմք հանդիսացող պայմանագրի համարը կամ գնման ընթացակարգի ծածկագիրը | լրացվում է վճարողի կողմից |
| 16. | փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանները | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է պահանջագրով նշված գումարի գանձման և շահառուին վճարման համար հիմք հանդիսացող փաստաթղթի տվյալները, որոնց հիման վրա շահառուն վճարման պահանջագիր է ներկայացնում վճարողին սպասարկող բանկին, ինչպես նաև նշվում են վճարողին փաստաթղթերի տրամադրման պայմանները (տրամադրում՝ վճարի դիմաց, տրամադրում՝ ակցեպտի դիմաց, տրամադրում՝ երաշխիքի դիմաց և այլն) | լրացվում է շահառուի կողմից |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 17. | առդիր էջերի քանակը | պարտադիր | ոչ պարտադիր<br>լրացվում է պահանջագրին կից ներկայացված փաստաթղթերի էջերի քանակը, որոնք պետք է տրամադրվեն վճարողին | լրացվում է շահառուիկողմից |
| 18.ա. | վճարողի ստորագրությունը | պարտադիր | ոչ պարտադիր<br>այս դաշտը չի լրացվում, եթե վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված պայմանագրով սահմանվել են այն դեպքերը, երբ վճարողը նախապես տալիս է իր համաձայնությունը/լիազորում է ֆինանսական կազմակերպությանը (մասնաճյուղին) կատարել վճարումներ՝ գանձելով այդ գումարը հաշվից: Ընդ որում վճարողի կողմից չստորագրվելու դեպքում կից ներկայացվում է նաև վճարողի և վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) միջև կնքված համապատասխան պայմանագրի պատճենը: | ստորագրվում է վճարողի կողմից |
| 18.բ. | վճարողի կնիքը | պարտադիր | պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում | կնքվում է վճարողի կողմից |
| 19.ա. | շահառուի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր, լրացվում է բանկ ներկայացնելիս | ստորագրվում է շահառուի կողմից |
| 19.բ. | շահառուի կնիքը | պարտադիր | պարտադիր՝ կնիքի առկայության դեպքում | կնքվում է շահառուի կողմից |
| 20.ա. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | ոչ պարտադիր | |
| 20.բ. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կնիքը | պարտադիր | չի լրացվում | |
| 21.ա. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) աշխատակցի ստորագրությունը | պարտադիր | պարտադիր<br>վճարման պահանջագիրը թղթային եղանակով ներկայացնելու դեպքում | |
| 21.բ. | վճարողին սպասարկող ֆինանսական | պարտադիր | պարտադիր<br>վճարման պահանջագիրը թղթային եղանակով | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | կազմակերպությա ն (մասնաճյուղի) կնիքը | | ներկայացնելու դեպքում | |
| 22. | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպությա ն (մասնաճյուղի) կողմից կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | պարտադիր | պարտադիր վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) կողմից պարտադիր նշվում է պահանջագրի կատարման ամսաթիվը, ժամը, րոպեն | |